ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Այգեկ գյուղական համայնքի բնակչության ընդհանուր ժողովի

21.01.2015թ.
գ. Այգեկ

Ժողովի նախագահ՝ համայնքի ղեկավարի տեղակալ Մ. Աբրահամյան
քարտուղար՝ աշխատակազմի քարտուղար Գ. Սարգսյան
մասնակիցներ՝ մարզպետարանի ներկայացուցիչ՝ Արայիկ Հակոբյան,
համայնքի 25 բնակիչ:

Լսեցին – Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկ գյուղական համայնքի ղեկավարի 2014 թվականի տարեկան հաշվետվությունը՝ բյուջեի կատարողականի և կատարված աշխատանքների վերաբերյալ /զեկ. համայնքի ղեկավար՝ Վ. Աբրահամյան/:

Կից ներկայացվում է հաշվետվությունը:

Ժողովի նախագահ՝ Մ. Աբրահամյան

Ժողովի քարտուղար՝ Գ. Սարգսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. Համայնքի 2014 թվականի բյուջեի տարեկան կատարողականը՝

2014 թվականի համայնքի բյուջեի վարչական մասով եկամուտները պլանավորվել է 29631,6 հազար դրամ: Սեփական եկամուտների հաշվարկը կազմել է 5874,7 հազար դրամ, որտեղ գանձվել և բյուջե է մուտքագրվել 7124,1 հազար դրամ գումար, այն կատարվել է 121,3 %-ով:

ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

հազար դրամ

	Եկամուտների տեսակները	Տարեկան պլան	Հաշվետու ժամանակաշրջան	
			Փաստացի	Տոկոս
1	հողի հարկ	1850,0	1865,3	100,8
2	գույքահարկ	3090,9	4316,7	139,7
3	տեղական տուրքեր	205,0	205,0	100,0
4	տեղական վճարներ	720,0	728,3	101,2
5	վարձակալական վճար	8,3	8,3	100,0
6	դոտացիա	23672,3	23672,3	100,0
7	սուբվենցիա	84,6	84,6	100,0
8	տարեսկզբի ազատ մնացորդ	223,2	223,2	---
	ԸՆԴԱՄԵՆԸ	**29854,8**	**31104,2**	**104,2**

ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐ

հազար դրամ

	Ծախսերի տեսակները	Տարեկան պլան	Հաշվետու ժամանակաշրջան	
			Փաստացի	Տոկոս
1	կառավարման ապարատ	14299,8	14037,8	98,2
2	նախադպրոցական կրթություն	10180,0	10180,0	100,0
3	մշակույթի տներ, ակումբներ	2800,0	2800,0	100,0
4	այլ մշակութային կազմակերպ.	770,0	769,3	99,9
5	հրատարակչություն	135,0	95,2	70,5
6	աղբահանություն	1320,0	1320,0	100,0
7	սոց.ծրագրեր	350,0	350,0	100,0
	ԸՆԴԱՄԵՆԸ	**29854,8**	**29552,3**	**99,0**

2. 2014 թվականի ընթացքում կատարված աշխատանքները.

1. Հրավիրվել և անցկացվել է ավագանու 9 նիստ՝ 6 հերթական, 3 արտահերթ ավագանու կանոնակարգով սահմանված կարգով, որի ընթացքում ընդունվել է ավագանու 42 որոշում:
2. Ընդունվել է համայնքի ղեկավարի 25 որոշում, արձակվել՝ 13 կարգադրություն:
3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարան և այլ կազմակերպություններ են ուղարկվել 198 գրություններ:
4. Բնակիչներին տրամադրվել են 367 տարբեր բնույթի տեղեկանքներ:
5. Կատարվել է քաղաքացիների ընդունելություն, քննության է առնվել նրանց առաջարկությունները, դիմումները, ձեռնարկվել են համապատասխան միջոցներ՝ դրանց լուծման ուղղությամբ: Ոչ մի դիմում անպատասխան չի մնացել:
6. Մարտի 8-ի կապակցությամբ գնվել է թատրոնի 10 տոմս, որի համար ծախսվել է 20000 ՀՀ դրամ:
7. Ապրիլի 7-ի Մայրության և գեղեցկության տոնի առթիվ, չխախտելով ավանդույթը, համայնքի 105 կանանց՝ թոշակառու մայրերի, գյուղապետարանի, մանկապարտեզի, բուժկետի աշխատողների համար 341 250 ՀՀ դրամով գնվել են նվերներ:
8. Դպրոցի 16 շրջանավարտների համար գնվել են նվերներ՝ 52000 ՀՀ դրամ գումարով:
9. Համայնքի առաջին դասարան հաճախող 21 երեխաների համար գնվել են նվերներ՝ դպրոցական պայուսակներ և գրենական պիտույքներ՝ 182 060 ՀՀ դրամ գումարով:
10. Այգեկ համայնքի 2014 թվականի բյուջեից տրամադրվել է դրամական օգնություն՝ ընդամենը 350 000 ՀՀ դրամ, որից՝
    - համայնքի կարիքավոր 9 ընտանիքների՝ 325 000 ՀՀ դրամ,
    - Հայաստան համահայկական հիմնադրամին՝ 25 000 ՀՀ դրամ:
11. 2014 թվականի նոյեմբերի 14-ին Այգեկի գյուղապետարանում անցկացվել է աշխատակազմի քարտուղարի հերթական ատեստավորումը:
12. Աշխատանքային պարտականությունները բարեխիղճ կատարելու համար գյուղապետարանի աշխատակիցների նկատմամբ կիրառվել է խրախուսում՝ յուրաքանչյուրին մեկ ամսվա աշխատավարձի չափով, ընդամենը՝ 1 245 800 ՀՀ դրամ գումար:
13. Կազմակերպվել և անցկացվել է Ամանորյա միջոցառում Այգեկի գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների, «Այգեկի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի, Այգեկի «Մշակույթ և սպորտ» ՀՈԱԿ-ի, համայնքի ավագանիների մասնակցությամբ, որի համար ծախսվել է 174 000 ՀՀ դրամ գումար:

14. Պարբերաբար 7 օրը մեկ իրականացվել է աղբահանություն:

15. Աշխատավարձի և պարտադիր սոց. վճարների գծով պարտքեր չկան:

Առաջնային հիմնախնդիրներից է՝

1. *Համայնքային ճանապարհների վերանորոգում:*
2. *Գերեզմանատան ցանկապատում:*
3. *Մշակույթի տան նոր դահլիճի կառուցում:*

Այգեկ համայնքի ղեկավար՝ Վ. Աբրահամյան

2015 թվականի հունվարի 21

Հայաստանի Հանրապետության

Արմավիրի մարզ գ. Այգեկ